բանց։ Եւ 'ի միւս կողմանէ տաղտկացեալ և զզուեալ էր 'ի բռնութենէ այլազգեաց, և կոչէր զԵրուսաղէմ ասպարէզ ագահաց և զրկողաց, և կամք իւրաքանչիւրոց՝ օրէնք, և բռնութիւն զիրաւունս ոչ ճանաչէ, և թէ ուր բռնութիւն՝ անդ չիք արդարութիւն, զի չէր հանդիստ գոնէ ժամ մի ինքեան և կառավարչաց Աթոռոյն յերեսաց կեղեքչաց. ոչ աղաչանաց լսէին, ոչ աղքատութեան ողորմէին, չգիտէին զայլ ինչ, բայց միայն խնդրել պարգեւս որում չէր կէտ և սահման, զի զոր կամէինն՝ զայն խնդրէին. եթէ ընդդիմանային՝ բանային դրունս մեծամեծ ՀԱՍՍՈՒՑ յայտնի և ծածուկ՝ յորոց վերայ զարմանայր Պօղոս՝ զի ոչ գիտէր, բայց ետես և ուսաւ. երանի թէ ասէ՝ յառաջագոյն ուսանէի, զի թերեւս ոչ անկանէի յայս վիշտ անտանելի։ Եւ զի զկնի ամսոյ ինչ պիտոյ էր նմա 258,255 դահեկան միայն վասն երկրորդ բաժնի պարտուց, թող զայլս որք ոչ կամէին մտանել ընդ բաժնիւ, և 'ի Կոստանդինուպօլսոյ չեղեւ ինչ օգնութիւն, որպէս խոստացեալն էին, Եւ Յովհաննէս վարդապետ ոչ ինչ առաքեաց յԵրուսաղէմ զոր ժողովեաց 'ի վիճակաց. և 'ի չքաւորութենէ յամախէին փոլիցայք 'ի վերայ Փոխանորդին՝ յորոց բաղմացան նեղութիւնք և տրտունջք յերկուց կողմանց, զի փոխանակ շահելոյ՝ առաջի կայր նոցա ՀԱՍՍ մեծ, նմին իրի ստիպէին զազգայինս գրել առ Առաջնորդս վիճակաց հասուցանել դրամ. և Զաքարիա վարդապետի ժողովել 'ի Կոստանդինուպօլիս. զի եթէ ոչ կամէին տալ ազգայինք մէն մի դրամ 'ի տարին վասն պարտուց Երուսաղէմի, զի՞նչ կարէին առնել որք բարձին զայն ծանր լուծ 'ի թիկունս իւրեանց այսպիսի անօրինակ խռովեալ ժամանակի. զի աղաղակ և տրտունջ Առաջնորդաց և ժողովրդոց առհասարակ զերկինս գրաւէին 'ի դառնութենէ ժամանակին։ Այլ յուսացեալ 'ի խնամս և 'ի գթութիւնս հոգեսէր ժողովրդոցն Հայոց, առաքեցին յԵրուսաղէմէ Վարդապետս 'ի կողմանս Գաղատիոյ, Եւդոկիոյ և յայլ քաղաքս՝ և յաշխարհն Կիլիկիոյ, գրեալ գիր աղաչանաց և յորդորանաց հոգալ վասն երկրորդ բաժնին։ Սակայն ոմանք 'ի պարտուց էին տեսակ ընդ տեսակի՝ որոց տուեալ շահն անցեալ էր քան զմայր գումարն, Եւ եթէ այնպիսեաց չիցէ փոխեալ մուրհակն՝